Իսկ Սայիֆ կը պատմէ, թէ Իյադ Ի. Ղանմ գնաց ալ-Քաքայի հետքերով, երբ Օմար գրեց Սադին, որ նա ուղարկէ ալ-Քաքային 4000 մարդուց բաղկացած գնդով Աբու Օբայդային օգնութեան. նոքա ուղեւորեցան Միջագետք դէպի (Եփրատի) ակունքը։ Սուհայլ Ի. Ադդի իւր բանակով հասաւ Ռաքքայ։ Միջագետաց բնակիչք Եմեսայում՝ լսելով Կուֆացիների մերձենալը՝ ցրուեցան իրանց գիւղերում. Սուհայլ պաշարեց նոցա, մինչեւ նոքա խաղաղութիւն կապեցին։ Այս ժամանակ Իյադ Միջագետաց Վասեթ քաղաքումն էր։ Բնակիչք համաձայնեցան գլխահարկ վճարել։

Աբդուլլահ Ի. Իտբան արշաւեց դէպի Տիգրիս, եկաւ Մոսուլ եւ անցաւ այնտեղից Մծբին. բնակիչք ընդունեցին նորան խաղաղութեամբ եւ այնպէս վարուեցան, ինչպէս եւ Ռաքքայի ժողովուրդը։

Երբ Ռաքքայի եւ Մծբինի բնակիչք հնազանդեցան, Իյադ առաւ իւր հետ Սուհայլին եւ Աբդուլլային, գնաց Խաւան եւ յափշտակեց ինչ որ նորա շրջակայքում գտաւ։ Երբ նա բնակիչաց մօտ եկաւ, նոքա հրաժարեցան նորան իրանց համաձայնութիւնն տալ գլխահարկի նկատմամբ. Իյադ ընդունեց այս, իսկ ով որ համաձայնեցաւ, նա նորան մշտական հարկատու նշանակեց։

Իյադ ուղարկեց Սուհայլին եւ Աբդուլլային Ռուհայ։ Բնակիչք չհամաձայնեցան գլխահարկ վճարել. ցանկացողը նշանակեցաւ մշտական հարկատու։

(2646) Ի. Իսհակ կը պատմէ, թէ 21 թ. Օմայր Ի. Սաղ Անսարին արշաւեց ... Միջագետք, իսկ Մոսուլայ՝ Անտիոքիայ եւ Կիլիկիայ. միեւնոյն թուին Աբու Հիշամ Ի. Օտբայ Ի. Ռաքիայ Ի. Աբդու-լ-Շամս խաղաղութիւն հաստատեց Կիլիկիայի, Անտիոքիայի եւ Մաւռաւռայ Մարինի բնակչաց հետ։